«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Հաստատություն ՝ *Կապան քաղաքի թիվ 9 ՆՈՒՀ*

Դաստիարակ ՝Սաթինե Բուդաղյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. Ազգային դաստիարակություն 4

ԳԼՈՒԽ 2. Ազգային տոներ և ծեսեր 6

2.1 Ամանոր 8

2.2 Սուրբ Ծնունդ 9

2.3 Տեառնընդառաջ.....10

2.4 Ծաղկազարդ 11

2.5 Սուրբ Զատիկ 12

2.6 Վարդավառ 13

ԳԼՈՒԽ 3. Տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները 16

3.1 Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցությունն ազգային ծեսերի կազմակերպման և իրագործման ընթացքում.....17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կյանքն անընդհատ գտնվում է շարժման և զարգացման մեջ և դարի խնդիր է այդ ընթացքի մեջ պահպանել ազգայինը: Այսօրվա երեխան մեծանում է մի ժամանակաշրջանում, որը էականորեն տարբերվում է իրենց ծնողների ապրած ժամանակաշրջանից՝տարբեր արժեքներ,իդեալներ,կանոններ: Էական խնդիր է պահպանել ազգայինը, սերնդեսերունդ մնայուն արժեքները՝ սերը ընտանիքի, հայրենի քաղաքի, հայրենիքի, ազգային տոների և ծեսերի նկատմամբ:

Նախադպրոցական տարիքի երեխաների ազգային դաստիարակությունը ժամանակի պահանջ է:

Թեման կարևոր է ու արդիական, հատկապես այս ժամանակաշրջանի համար,երբ հայ հասարակության մեջ նկատվում է ազգային արժեհամակարգի նկատմամբ հասարակական գիտակցության նվազում, այս ամենը ահազանգ է,որ պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել մատաղ սերնդի ճիշտ և համակողմանի դաստիարակության ու զարգացման գործին:

Ընտրեցի«Ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում» թեման, որովհետև այսօր վճռական նշանակություն է ստանում ազգային դաստիարակության անհրաժեշտությունը: Արդի հասարակության համար կարևորագույն խնդիրներից է բարոյական ազգային նորմերի ճիշտ արժևորումը և դրանց կիրառումը նոր սերունդների դաստիարակության գործում:

Հետազոտության նպատակը է ուսումնասիրել ազգային տոներն ու դրանց կազմակերպման առանձնահատկությունները քանի որ երեխայի համակողմանի զարգացման համար ազգային դաստիարակությունը կարևորագույն արժեք է,հիմք է հանդիսանում և ձևավորում է հասունացող սերնդի հոգեկերտվածքը՝միաժամանակ նրանց ներգրավելով սոցիալ-մշակութային հարաբերությունների ոլորտը:Նախադպրոցական մանկավարժությունը,որը հանդիսանում է մանկավարժության առաջին օղակը կրթադաստիարակչական աշխատանքներում պետք էիր ուրույն տեղն ունենա ազգային ավանդույթներով իրականացվող դաստիարակությունը, ազգային տոների և ծեսերի կազմակերպումը:

ԳԼՈՒԽ 1. Ազգային դաստիարակություն

Դեռևս հայ մեծ լուսավորիչ,մանկավարժ Խաչատուր Աբովյանը գնահատելով

ազգային ավանդույթների դաստիարակչական դերը,մատնանշում է, որ ամեն մի ուսում և դաստիարակություն պետք է համապատասխանի ժողովրդի ոգուն, վիճակին ու պահանջմունքներին։ Հայերը՝«խաղաղության օրերին աշխատասեր են և հեզ, թշնամիների սրերի դեմ՝ արիասիրտ ու համբերատար, մտքի ու բարոյական ուժերի զարգացման մեջ՝ ճոխ ու քնքուշ, ազգային ճոխությունների անձեռնամխելիությունը պահպանելիս՝ հպարտ և անկրկնելի»։ Մեծ լուսավորչի ամեն մի խոսքի ու տողի մեջ ցայտում է բոցավառ սերը դեպի հայրենիքը, նրա բնությունը, անցյալը, պատմական մեծ դեպքերը,մշակույթը, իր ժողովրդի սովորույթներն ու ավանդույթները։

Ներկայումս նախադպրոցական դաստիարակության համակարգում շեշտակի ուշադրություն է դարձվում ազգային և հայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրներին։ Մշակվում և աստիճանաբար մանկապարտեզի մշակման գործնթաց են նեռարվում տնտեսագիտական,քաղաքացիական և իրավական կրթության մեթոդիկաներ, որոնք միասնաբար նպաստում են երեխայի անձնավորության հենքային որակների ձևավորմանը՝ ազգապահպան դաստիարակության պայմաներում։ Նախադպրոցական կրթության ժամանակակից հայեցակարգը պահանջում է յուրաքանչյուր երեխայի անհատականության բացահայտում,որի բաղկացուցիչ մասն են կազմում նրա ազգային դաստիրակության տարրերը։ ՈՒսումնասիրության արդիականությունը պայմանավորված էազգային մտածելակերպի ձևավորման ավանդական մոտեցումների մանրամասն վերլուծության անհրաժեշտությամբ, որի արդյունքում կնշմարվեն հիմնախնդրի լուծման ժամանակակից եղանակները։

ՈՒսուցման ամենակարևոր տարիները սկսվում են ծնունդից։

Այդ վաղ տարիներին մարդիկ կարող են ավելի շատ տեղեկություն յուրացնել, քան ավելի ուշ։ ՈՒղեղը ամենաարագն է աճում կյանքի առաջին տարիներին։

Սոֆյա Արղությանի մանկավարժական դիրքորոշումները նախադպրոցական աղգային դաստիարակության վերաբերյալ, որոնք առաջարկում են կրթական խնդիրների լուծման եղանակներ։ Նրա կողմից առաջարկված պարապմունքների բովանդակությունը, դրաց կազմակերպման և անցկացման մեթոդիկան, օգտագործվող դիդակտիկ պարագաներն ու նյութերն՝ որպես մանկավաժական հատուկ մոտեցումներ, կարող են օգտագործվել ժամանակակից մանկապարտեզի մանկավարժական գործընթացում նախադպրոցականին ազգային առանձնահատկությունների մասին գիտելիքներ փոխանցելու նպատակով։ Բարոյա–աշխատանքային դաստիարակության մեթոդիկան կոչված է նպաստելու ազգային պատկանելիության գիտակցմանը և հանրօգուտ ազգանպաստ գործունեության արժևորմանը։ Այն նույնպես կիրառելի է նախադպրոցական տարիքում։

Սոֆյա Արղությանի մանկավարժական շեշտադրումներով կառուցված նախադպրոցական ազգային դաստիարակության գործընթացը ներառում է մանկավարժական աշխատանքներ երեք ուղղություններով՝ պարապմունքների կազմակերպում, ազգային դաստիարակության մեթոդիկայի մշակում, խաղերի ուղղորդում։

Նախադպրոցականի ազգային դաստիարակության զարգացման հոգեբանամանկավարժական պայմանները ներկայացված է նախադպրոցականի կրթության ժամանակակից հայեցակարգը, որը կարևորում է ինքնուրույն և հաղորդակցման պատրաստ, սոցիալական միջավայրում ազատ կոզմնորոշվող և սեփական արժեքներն օբյեկտիվորեն գնհատող անձնավորության ձևավորումը։

Հայեցակարգի հիմքում դրված է յուրաքանչյուր երեխայի անհատականության բացահայտումը, որի բաղկացուցիչ մասն են կազմում նրա ազգային մտածելակերպի տարրերը։ Նախադպրոցական տարիքում աշխարհի ժողովուրդների նկատմամբ դրական վերաբերմունք է ձևավորում ազգայինի մեջ համամարդկայինը առանձնացնելով։ Նախադպրոցականի դաստիարակության գերխնդիրներից է երեխային դեպի համընդհանուր մարդասիրական արժեքները ուղղորդելը,որին կարելի է հասնել ազգային առանձնահատկություններին և մշակույթին ծանոթացնելու միջոցով։

Նախադպրոցական կրթական հաստատություններում,այսօր իրականացվում է ծանոթացում հասարակական երևույթներին և դրանց հանդեպ որոշակի վերաբերմունքի ձևավորում։ Երեխային փոխանցվում է գիտելիքներ ընտանիքի և հայրենիքի, մասնագիտությունների և աշխատանքի, ազգային խորհրդանիշների մասին, սակայն նշվածներից բացի կարևոր է նաև ազգամետ դիրքորոշումների ձևավարումը։

Մանկապարտեզը 3–6 տարեկան երեխաների համար այն կրթական հաստատությունն է, որտեղ սկսվում է դրսևորվել յուրաքանչյուրի մարդասիրական մոտեցումներն ու սոցիալ անձնային հատկությունները, որոնք հնարավորություն են տալիս երեխային ինքնահաստատվելու հասակակիցների միջավայրում, հետագայում հասարակական կյանքում։

Նախադպրոցականի ազգային մտածելակերպի տարրերի ձևավորումն ու դրսևորումները պայմանավորված են մանկապարտեզում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների նպատակահարմարությանբ կրթության բովանդակության, ազգային ուղղվածությամբ, ինչպես նաև դաստիարակների և ծնողների սոցիալական դիրքորոշումներով։

ԳԼՈՒԽ2 ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐ ԵՎ ԾԵՍԵՐ

Կրթական համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում աշխարհաճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Հիմնականում այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի մարդկանց, շրջապատի նկատմամբ: Այստեղ է, որ նրա մեջ սերմանվելու են մարդուն այսօր այնքան անհրաժեշտ բարիության առաջին հատիկները: Հայ երեխայի բարիության ու առաքինության առաջին սերմնացանը անհրաժեշտ է հայեցի կրթություն ու դաստիարակություն և մենք՝ մանկավարժներս պարտավոր ենք ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն հայ մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար:

Մշակույթը չէր պահպանվի, եթե գոյություն չունենային սերնդեսերունդ նրա փոխանցման միջոցները; Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը և ազգային տոները; Մենք՝ հայերս մեր հիշողության, մեր պատմության տերն ենք ու ժառանգորդը՝ Հայկ Նահապետից մինչև հավերժություն: Մենք պետք է ուժ առնենք մեր ազգային արժեքներից՝ նրանցից վերցնենք լավագույնը, ազգային մտածողության շարժառիթներն ու ուղենիշները: Երեխաների աշխահընկալման գեղագիտական ճաշակի ձևավորման համար առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային տոները, ընտանեական հանդիսությունները, տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները: Դրանք հոգեհարազատ են երեխաներին, քանի որ այս դեպքում նրանք դառնում են մասնակից և կատարող: Ազգային արժեք են նաև ծեսերը: Մշակույթը չեր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներ, որոնց կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը: Ծեսն իրենից ներկայացնում է ավանդական կրոնական արարողություն, որին հավատացյալները վերագրում են մոգական հատկություններ: Ծեսը լայն տարածում ունի կրոնում, կենցաղում: Այն խորհրդանշական ձևերով վերարտադրում է ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարած իրադարձությունները և դրաց միջոցով ապահովում է ազգի, ժողովրդի միասնականությունը: Հայոց եկեղեցում ծեսերը հաստատել, սահմանել և կարգավորել են կաթողիկոսները՝ համաձայն Աստվածաշնչյան մեկնությունների :

Այս գործում մեծ ներդրումներ են ունեցել Գրիգոր Լուսավորիչը և Ներսես Մեծ կաթողիկոսները: Հայոց ազգային տոներն ու ծեսերը տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ են ունեցել: Սակայն այդ տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի կրոնական փոփոխություններն նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա:

Հայկական մշակույթը հնուց ի վեր մինչ օրս էլ աչքի է ընկնում իր բազմաթիվ ու յուրօրինակ ազգային տոներով: Մենք բոլորս այս տոները նշում ենք, որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից: Ժողովրդի մեջ տոները նշելու

ձգտումը շատ մեծ է, և տոնը ոչ թե հայտարարված տոնական օրն է, այլ օրվա բովանդակությանը և ժողովրդի մշակութային նորմերին համապատասխան տոնածիսական արարողակարգը: Այդ տոներից են Նոր տարին, Սուրբ Ծնունդը, Տեառնընդառաջը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Համբարձումը, Վարդավառը և այլն: Մարդիկ այնքան էին հավատում ծեսերի զորությանը, որ հնարել էին անձրևաբեր և անձրևախափան ծեսերը՝ որպեսզի կարողանային ծեսերի միջոցով կարգավորել բնության երևույթները:

Ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել է և սերնդեսերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը և ազգային առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել առօրյա կյանքի ու կենցաղի վրա: Ծեսը նեռառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական:

«Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողակարգ բնույթը: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կեցաղում:

Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը դա ծիսակարգն է: Այն նեռառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցվում են մարդուն կյանքի և գործունեության կարևոր պահերին:

Ծեսերն անգնահատելի դեր ունեն, յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդն հանդես է գալիս որպես ստեղծագործ, որպես գործիչ:

Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը՝ ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր,տոներ,որտեղ նրանք դառնում են այս ամենի կրող և ակտիվ փոխանցող: Ազգային ծեսերն այն միջավայրն է, որը մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող:

2.1 Ամանոր

Ըստ պատմական տվյալների, վաղ ժամանակներում հայերը Նոր տարին նշել են մարտի 21ին՝ գարնանային գիշերահավասարի օրը։ Բնությունը հարություն է առնում գարնան սկզբին, և հայ մարդը այդ օրն էլ դարձրել է Նոր տարի և նշել շքեղ տոնախմբությամբ՝փառաբանելով բնության զարթոնքը, ակնկալելով բերքառատ տարի։

Հայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նավասարդի 1–ը՝ օգոստոսի 11–ին և տևել է մինչև սեպտեմբերի 9–ը։ Ըստ ավանդության, Հայկ Նահապետը սպանել է Բելին՝ ազատություն պարգևելու իր տոհմին ու հետնորդներին։ Ենթադրաբար դա տեղի է ունեցել մ.թ.ա. 2492թ. օգոստոսի 11–ին։ Օգոստոսյան տոները հայերը կոչել են Նավասարդ։ Բառը կազմված է նավա/նոր/, սարդ/տարի/ բառերից։ Իսկ 18–րդ դարում, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք, որպես նոր տարվա սկիզբ ընդունվեց հունվարի 1–ը (համապատասխանեցնելով քրիստոնեական մի շարք երկրներում ընդունված տարեսկզբի հետ)։ Միայն 20–րդ դարի սկզբներից համընդհանուր դարձավ հունվարի 1–ը, որպես տարվա սկիզբ, տոնելը։ Հիշատակվում են տոնի տարբեր անուններ՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ, Կալոնատար, Կալանտար։ Նոր տարվա նախորդող գիշերն էլ հայտնի էր Լոլեի գիշեր, Խլվլիկ, Կաղ անուններով։

Նոր տարին սկսվում է դեկտեմբերի 30–31–ին՝ ամանորյա խմորեղեն պատրաստելով։ Խմորեղենի մեջ ամենագլխավորը «Տարի հաց» ծիսական հացն էր։ Տարբեր տեղերում այդ հացի բաղադրատոմսերը, ձևը տարբեր էր։ Այն կարող էր լինել գաթա, բաղարջ և այլն։ Կարող էր զարդարված լինել զանազան զարդանախշերով, ընկույզով, չամիչով, սերմերով,պտուղներով։ Գլխավորն այն է որ հացի մեջ որևէ նշան է դրվում՝ կորիզ կամ լոբի կամ ուլունք, ավելի հաճախ՝ դրամ։ Տարի հացը տարբեր տեղերում տարբեր օր են կտրում՝ տարեմուտի ընթրիքին, հունվարի 1–ի առավոտյան, հունվարի 4–ին՝ ճրագալույծին, հունվարի 6–ին՝ Ս. ծննդին։ Շատ տեղերում թխում էին նաև մարդակերպ թխվածքներ, որոնք կոչվում էին «Ասիլ–Բասիլ», «Վասիլ»։

Նոր տարվա նախորդ օրն ու գիշերն 10–12 տարեկան երեխաների խմբերը շրջայց էին կատարում համագյուղացիներին։ Նրանք երգելով տուն էին մտնում կամ երդիկից դատարկ տոպրակ իջեցնելով՝ ավետում էին տարվա ավարտը, Նոր տարվա գալուստը։ Երգերի տեքստի միջոցով գովերգում էին ընտանիքի անդամներին։

Երեխաների սիրած խաղերից էին վեգը և ընկուզախաղերը: Որոշ տեղերում նաև ընկույզից պատրաստում էին «Չարխափաններ»՝ չարը քշող, վախեցնող, չքացնող:

Նոր տարվա օջախն առանձնահատուկ էր, երբ նորոգվում էր կրակը, իսկ շատ տեղերում մի մեծ քոթուկ էին դնում օջախի մեջ՝ աստիճանաբար առաջ մղելու պայմանով այնպես, որ մինչև ծնունդ անմար մնար:

Մանկապարտեզում Ամանորյա տոնակատարությունը հատուկ տեղ է գրավում տոների շարքում: Այն երեխաների ամենասիրած տոներից մեկն է: Երեխաները մեծ ոգևորությամբ են պատրաստվում տոնին, բոլոր երգերը, պարերը մեծ ոգևորությամբ են կատարում: Ամանորի նախաշեմին երեխաները պատրաստում են թեմատիկ աշխատանքներ, տոնածառի խաղալիքներ, բնական նյութերով ձնագնդիկներ:

2.2 Ս. Ծնունդ / Աստվածահայտնություն /

Նոր տարուն հաջորդում են Ս. Ծնունդ / Աստվածահայտնություն /, Ջրօրհնեքք /Մկրտություն / տոները: Մեր եկեղեցին Սուրբ Ծնունդը նշում է հունվարի 6–ին:Այդ օրը մատուցվում է Սուրբ Պատարագ, և մարդիկ իրար ողջունում են՝ ասելով.« Քրիստոս ծնավ և հայտնեցավ, օրհնյալ է Ծնունդը Քրիստոսի»: Համաձայն եկեղեցական ավանդության՝ Քրիստոսը Հովհաննես Մկրտչից Հորդանան գետում մկրտվեց այն օրը, երբ լրացավ նրա երեսուն տարին: Այդ պատճառով հայոց եկեղեցին Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոները կատարում են միևնույն օրը: Հունվարի 5–ի երեկոյան վառում են եկեղեցու բոլոր կանթեղները, մատուցվում է ճրագալույցի Ս. Պատարագ: Հետաքրքիր է որ ճրագալույցի Ս. Պատարագը տարին երկու անգամ է մատուցվում՝ Ս. Ծննդյանն Ս. Հարության տոներին: Ճրագալույց նշանակում է ճրագ–մոմ, լուցանել–վառել: Այդ օրը մարդիկ եկեղեցում վառված ճրագներն տուն են տանում: Այն խորհրդանշում է աստվածային լույս, եկեղեցու օրհնություն: Ջրագալույցը խորհրդանշում է Բեթղեհեմյան աստղի լույսը, որն առաջնորդեց մոգերին դեպի Հիսուս Մանուկը:

Հունվարի 6–ին՝ Ս. Ծննդյան պատարագից հետո կատարվում են նաև Ջրօրհնեքի արարողություն: Ջուրն օրհնվում է Սուրբ խաչով, Սուրբ ավետարանով և Մյուռոնով:

Հունվարի 5–ի երեկոն բոլոր հայ ընտանիքներում թաթախման երեկո էր, այն ժամերգությունից վերադառնալով, պասը բացում էին Ծննդյան տոնին ընդունված ճաշատեսակներով: Ժամերգությունից տուն դարձողները իրեց հետ տանում էին այնքան մոմ, որքան անդամ կար տվյալ ընտանիքում: Ընտանիքի յուրաքանչյուր անդամի սպասքի առաջ վառում էին նրա համար նախատեսված մոմը: Եվ մոմերի լույսի ներքո, բոլորում սեղանի շուրջ: Այդ երեկո սեղանի գլխավոր զարդը ձուկն է: Դրվում էին նաև ձավարի, բրնձի, արիշտայի խառը փլավները, ալյուրից պատրաստված ու մեղրով քաղցրացրած խաշիլը, սիսեռով ու չորացրած բանջարեղենով ապուրը,որը հայտնի է «Մայրամա ճաշ» անունով:

Ընտանիքը նոր էր բոլորած լինում ընթրիքի սեղանի շուրջ երբ սկսվում էր «Ավետիս » երգող խմբերի այցը: Դրանցում դրսևորված էին Քրիստոսի ծննդյան ու կյանքի վերաբերյալ ժողովրդական պատկերացումները և փառաբանում Փրկչին:

2.3 Տեառնընդառաջ

Հայ Առաքելական Եկեղեցին Տեառնընդառաջը տոնում է փետրվարի 14– ին, Քրիստոսի ծննդից՝ հունվարի 6–ից քառասուն օր հետո: Այն անշարժ տոն է: Երբ Մարիամն ու Հովսեփը քառասնօրյա Հիսուսին բերում են տաճար, ընդառաջ է գալիս Տիրոջ գալստյանն սպասող Սիմեոն ծերունին, գրկում մանկանը և գոհություն ու փառք տալիս Աստծուն, որ իրեն արժանի դարձրեց Փրկչին տեսնելու: Այստեղից էլ տոնի անունը «Տեառնընդառաջ՝ Տիրոջն ընդառաջ»: Տոնական հանդիսությունները, սակայն ունեն հնագույն ավանդույթներ և առնչվում են կրակի մաքրագործող զորության հանդեպ ունեցած հավատի հետ: Հեթանոսական կրոնների մեջ մեծ տեղ էր գրավում կրակի պաշտամունքը: Կրակը խորհրդանիշն էր Արևի և Լույսի, ինչպես նաև՝ ջերմության: Կրակը համարվում էր նվիրական սրբություն: Ընտանեկան բույնը, երդիկը կոչվում է նաև օջախ, ծուխ: Սովորաբար Տյառնընդառաջի հրավառությունը վերագրվում է հայոց Տիր, ինչպես նաև Միհր աստծուն: Տիրը երազների մեկնիչն էր և պաշտպանը՝ դպրության ու արվեստի, իսկ Միհրը մարմնավորում էր կրակի ու լույսի ուժը: Տոնի գլխավոր նպատակն էր՝ կրակ միջոցով ազդել սառնամանիքների վրա և զորացնել արևի ջերմությունը: Արարողությունները եկեղեցում սկսվում էն երեկոյան ժամերգությամբ, որից հետո արգելվում էր «Լույս զվարթ» շարականը: Փետրվարի 13–ի երեկոյան ժամերգությունից հետո տեղի է ունենում նախատոնակ՝ բաժանում են մոմեր, և եկեղեցականը վառում է սեղանի վրա դրված մոմերը: ժամերգությունից հետո հավատացյալները վառում են իրենց մոմերը և տանում տուն: Եկեղեցական արարողությունից հետո, հինավուրց սովորության համաձայն, եկեղեցու բակում կրակ է վառվում: Հին Ջուղայում փշե դեզը եկեղեցու գավթում պարտավոր էին պատրաստել նույն տարում պսակված երիտասարդները: Հանդիսակատարության ժամանակ նույն երիտասարդները, վառ մոմերը ձեռքում, շարքով կանգնում էին դեզի առաջ: Երբ քահանան կարգը կատարելով իր մոմով, առաջինը վառում էր դեզը, նրանից հետո իսկույն վառում էին նորապսակները, և այլևս ոչ ոք: Երիտասարդները

վառած մոմերով վերադառնում են տուն, վառում նախօրոք պատրաստված փոքրիկ դեզերը և թռնում վրայով։

Մեծ կարևորություն ուներ նաև Տեառնընդառաջի խարույկի մոխիրը։ Այն, ըստ պատկերացումների, օժտված էր բուժող և առատացնող զորությամբ։

Մեր մանկապարտեզում պարտադիր նշում ենք Տեառնընդառաջի տոնը։ մանկապարտեզի բակում կրակ ենք վառում և շուրջը պտտվելով պարում ու երգում ենք մեր ազգային, ծիսական պարերը և երգերը։ Հետո դաստիարակների օգնությամբ երեխաները թռնում են կրակի վրայով։ Այնուհետև երեխաները համտեսում են ծիսական ուտեստները։

#ԿապանՆՈՒՀազգային բարոյականհայրենասիրականդաստիարակություն#Տեառնընդառաջիտոնը մանկապարտեզիբակում

2.4 Բարեկենդան

Մեր ազգային տոներից է Բարեկենդանը։ Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն։ Այն ուրախության ու զվարճանքի օր է, հիշեցնում է Ադամի և Եվայի դրախտային կյանքը, երբ նրանք ապրում էին վայելքի ու անհոգության մեջ։ Նախկինում դրանք հեթանոսական տոնախմբությունների օրեր էին, կատարվում էին մարտի սկզբին։ Տոնը հավանաբար կապ ուներ գարնան սկսվելու հետ։ Եվ պատահական չէին զվարճությունները, որոնք արթնացող բնությանը ուրախ դիմավորելու, մարդկանց վերակենդանացնելու խորհուրդն ունեին։ Մարդիկ միմյանց մաղթում էին բարի կենդանություն։ Հետագայում քրիստոնեությունը իրեն հարմարեցրեց և դարձրեց Մեծ Պահքի նախորդող շաբաթվա տոն, որը նշվում էր կեր ու խումով, մասսայական խաղերով, մրցումներով, պարերով և այլն։ Այն տևում էր երկու շաբաթ, անմիջականորեն հաջորդելով Ս. Սարգսին և ավարտվելով Մեծ պասով։ Մեծ պահքի նախորդող կիրակին Բուն Բարեկենդանի օրն էր։ Պահքի կարևոր լինելը մարդկանց ցույց է տվել Քրիստոսը։ Նա անապատում 40 օր է անցկացրել։ Մարդիկ Հիսուս Քրիստոսի օրինակով են պահում Մեծ պահքը։ Մեծ պահքի 40 օրերին գումարվել է նաև Զատիկին նախորդող 9 օրերը, և այն տևում է 49 օր։ Մեծ պահքն ավարտվում է Զատիկի՝ Քրիստոսի Հարության տոնով։

2.5 Ծաղկազարդ

Հնագույն շրջանում հայ ժողովուրդն ունեցել է խնկենու, սոսու, կաղնու, չինարենու, ուռենու պաշտամունք՝ որպես տիեզերքի ներդաշնակության, անմահության, պտղաբերության, կենաց ծառի խորհրդանիշ: Մեր նախնիները Ատիս աստվածուհու տոնին նվիրված օրը, առավոտյան վաղ, արևից առաջ գնում էին սրբազան անտառ և ծիսակատարությամբ ծառից պոկում մի ճյուղ: Ծառը զարդարում էին շորի պատառիկներով, պտուղներով:

Եղել է տոն, որը ժողովուրդն անվանել է Ծառզարդար: Զատիկից մեկ շաբաթ առաջ Հիսուսը, ավանակի վրա նստած, իր աշակերտների հետ մտավ Երուսաղեմ: Ժողովուրդը նրան ցնծությամբ դիմավորեց. մարդիկ իրենց զգեստներն ու արմավենու ճյուղեր էին փռում Հիսուսի ոտքերի տակ:

Ծաղկազազարդը (Ծառզարդար) Մեծ Պասի նախավերջին կիրակնօրյա տոնն է: Այդ օրը եկեղեցիներում Ս. Պատարագ է մատուցվում, մարդիկ ուռենու բողբոջած ճյուղերն օրհնել են տալիս և տանում իրենց տուն:

Հայաստանում տարվա այդ ժամանակ բողբոջում են ուռենիները, բարդիները: Ուռենու ճյուղերը խորհրդանշում են այն արմավենու ճյուղերը, որոնք հրեաները փռում էին Հիսուսի ոտքերի տակ, երբ նա մտնում է Երուսաղեմ:

2.6 Սուրբ Զատիկ

Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունը եկեղեցու գլխավոր տոներից մեկն է: Աստծո Որդին իր արյունը հեղեց աշխարհի և մեղավոր մարդկանց փրկության համար, խաչվեց, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ: Հայոց տոների շարքում Զատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենամեծ և ամենասպասված տոնն է: Այն շարժվում է 35 օրերի միջև՝ մարտի 22–ից մինչև ապրիլի 25–ը: Զատիկ բառին տրվում են տարբեր ստուգաբանություններ: Տոնի ամենաառաջին և ամենամեծ խորհուրդը բնության զարդոնքի, տարվա եղանակների զատվելու, որոշվելու, բաժանվելու գաղափար: Զատվել բառն այստեղ խորհրդանշում է ոչ միայն տարվա եղանակների զատումը, այլ նաև բնության գույների զատումը, բաժանումն ու տարբերակումը համընդհանուր գորշությունից, միապաղաղությունից: Հարություն առած բնությունը զարդարվում է կանաչով, ծառ ու ծաղկով, հողը ծածկվում է գույներով, ծաղկում են ծիրանենիները, խնձորենիները, տանձենիները, դեղձենիները… Հարության տոնի հետ միաժամանակ վերադառնում են չվող թռչունները՝ արագիլը, ծիծեռնակն ու սարյակը: Զատիկ բառի մյուս մեկնաբանությունը ազատվել իմաստն ունի: Բացի վերոհիշյալ խորհրդից, այսինքն՝

ձմռան երկար թագավորությունից բնության ազատվելուց, հավանաբար այն նշանակել է նաև Մեծ Պասը ավարտելու, դրա խստությունից ազատվելու իմաստը, երբ մարդիկ քառասնօրյա պասով մաքրագործելով հոգին ու մարմինը, վերջապես իրավունք են ստանում օգտվելու երկար սպասված, կենդանական ծագում ունեցող կերակուրներից։ Այդ է պատճառը, որ գրպաններում մի–մի ձու դրած, նրանք գնում էին ժամերգության և ավարտվելուց անմիջապես հետո, ուտում ձուն։

Գրիգոր Տաթևացին նման մի միտք է արտահայտել «միայն Զատիկին ենք ձուն կարմիր ներկում, որովհետև ձուն օրինակ է աշխարհի, և ինչպես իմաստուններն են ասում՝ դրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է։ Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է, որ աշխարհը գնվեց Քրիստոսի արյամբ։ Եվ մենք կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով, հռչակում ենք մեր փրկությունը։» Ուշագրավ է, որ ձուն համարվում է կենաց ծառի, կյանքի խորհրդանիշ։ Զատիկի առավոտյան մատուցվում է Ս. Պատարագ, որի ավարտից հետո տնից տուն անցնելով՝ մարդիկ իրար հայտնում են Սուրբ Հարության ուրախաբեր ավետիսը՝ ասելով. **Քրիստոս հայրավ ի մեռելոց: Օրհնյալ է հարությունը Քրիստոսի**:

Մանկապարտեզում Սուրբ Զատիկի տոնին նախապատրաստվում ենք մեծ ոգևորությամբ։ Երեխաների հետ «կենաց ծառի» համար պատրաստում ենք «ձվիկներ», որոնք իրենց ձեռքերով գեղեցիկ գույներով նախշազարդում են, զարդարում զատկական ծառը։ Նախօրոք դաստիարակի օգնությամբ բամբակի վրա ցանում ենք ցորեն, որը զատիկի խորհրդանիշներից մեկն է։

2.7 Վարդավառ

Ամեն տարի շքեղ հանդիսությամբ տոնական շարականներով ու աղոթքներով, Զատիկին հաջորդող 14–րդ կիրակի օրը մեր Եկեղեցին տոնում է Պայծառակերպության կամ Այլակերպության տոնը, որը ժողովրդի մեջ հայտնի է Վարդավառ անվանմամբ։

« Այդ օրը հիսուսը Պետրոսի, Հակոբոսի և Հովհանեսի հետ բարձրացավ Թաբոր լեռը՝ աղոթելու։ Աղոթքի պահին Աստվածորդու դեմքը փայլեց՝ ինչպես արեգակ,

զգեստները շողարձակեցին ինչպես լույսը։ Հանկարծ առաքյալներին երևացին Մովսես և Եղյա մարգարեները, ովքեր խոսում էին Հիսուսի հետ։ Մի լուսավոր ամպ նրանց վրա հովհանի եղավ, և ամպից լսվեց մի ձայն, որ ասում էր.«Դա է իմ սիրելի Որդին, դրան լսեք» ։ Եկեղեցական մեկնաբանությամբ Քրստոսն է նմանեցվում վարդի։

Ավանդությունը պայծառակերպության վայր է համարում Թաբոր լեռը, որի վրա էլ հետագայում կառուցվել է եկեղեցի `ի հիշատակ Տիրոջ պայծառակերպության» ։

Հայաստանի որոշ շրջաններում երբեմն ժողովուրդը Վարդավառը նշում էր հուլիսի 22–ին հաջորդող կիրակի օրը, չնայած որ այն կարող էր ընկնել հունիսի 28–ից մինչև օգոստոսի 1–ը։

Վարդավառ բառը տարբեր իմաստներով է ստուգաբանվում, որոնք բոլորն էլ բնութագրում են տոնը, ինչպես նաև՝ մատնանշում դրա խորհուրդները։ Մի տարբերակով «վարդավառ»բառը կազմված է վարդ(ուարդ) -ջուր և վառ–սրսկել, լվանալ արմատներից, նշանակում է ջրցանություն, որը կազմում է տոնական արարողակարգի գլխավոր մասը։

Տոնի համն ու հոտը կազմում էին համատարած ջրցանությունները։ Դրանք պարզապես խաղեր չէին, այլ Վարդավառի տոնի հանդիսավոր արարողություն, որն ուղղակի անհրաժեշտություն էր։ Ջուր ցանելուն շատ տեղերում ասում էին «վարդավառին տալ»։ Վաղ առավոտից իրար վրա ջուր էին լցնում բոլորը՝ ով ինչով կարող էր։ Հաշվի չէին առնում ոչ տարիքը, ոչ սեռը, ոչ հասարակական դիրքը։

Նախիջևանում վաղ առավոտյան կանայք, թելերի վրա ծաղիկներ, խնձոր մանր վարունգ և վարդեր ամրացնելով, խաչաձև կապում էին երեխաների կրծքին և տանում եկեղեցի։

Վարդավառը համընկնում էր դաշտերում հասունացած հացահատիկների հավաքին։ Տոնի օրը գրեթե ամենուր հասկեր էին տանում եկեղեցի՝ խնդրելով,որ դաշտերը կարկուտից ու մորեխից անվնաս մնան։ Ցորենի հասկերից «խաչբուռ» էին պատրաստում։ Դրանք լինում էին խաչաձև, ծառի ճյուղի, ծաղկեփնջի նման։

Ագուլիսում Վարդավառից առաջ նշանված աղջիկները մի ամանի մեջ ցորեն կամ գարի էին կանաչեցնում։ Վարդավառին մի երեխայի հասակի չափ փայտ էին տնկում այդ կանաչի մեջ ու զարդարում մանր վարունգով, խնձորով ու վարդով։ Փայտը հաճախ թևավոր էր լինում։ Այս զարդարված փայտը կանաչի հետ միասին կոչվում էր «Խնդում»։ Տոնի կեսօրից հետո, տարեց կանացից մեկը վերցնում էր այդ խնդումը տանում գյուղի հիապարակում և «հսկում» նրան։ Հանդիսականները «Խնդումի» շուրջը երգում ու պարում էին։

Մեր մանկապարտեզում մենք նախապատրաստվում ենք տոնին և նշում մեծ հանդիսավորությամբ։

Կից ներկայացնում եմ նկարներ՝

ԿԱՐԴԱԿԱՌ

Գլուխ.3 Տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները

Նախադպրոցական տարիքի երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է, ծեսեր ,տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրողը ու ակտիվ փոխանցողը: Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացումը ծեսերի, տոների իրագործման ընթացքում տեղի է ունենում բնական, հաղորդակցական միջավայրում և մթնոլորտում: Ծեսի կազմակերպման ընթացքում երեխան խոսում և շփվում է հասակակիցների, մեծահասակակիցների հետ, և սխալ կլինի մտածել, թե երեխայի խոսքը կարելի է զարգացնել միայն խոսքի զարգացման հատուկ պարապմունքների ժամանակ, կամ երբ ուշադրություն ենք դարձնում նրա խոսքին: Նախադպրոցական կրթության մեջ տոների և ծեսերի կազմակերպման առանջնահատկություններից մեկն էլ այն է, որ երեխայի անձի զարգացման բոլոր ոլորտները զուգահեռ զարգանում են ծեսին նախապատրաստվելու և այն իրագործելու գործունեության ընթացքում:

Երեխաները ծեսի կազմակերպման ընթացքում շփվում և հաղորդակցվում են: Նրանք յուրովի նախագծում են իրենց անելիքը, քննարկում ընկերների հետ: Ծեսի կազմակերպման ընթացքում դաստիարակը ծեսի և գործողությունների մասին անհարաժեշտ տեղեկություններ է հաղորդում: Երեխաները պատմում են իրենց իմացածը և դրան ավելացնում նորը: Երեխան իր գործունեության բոլոր տեսակների զուգահեռ խոսում է, պատմում, թե ինչ է անում, կարծիք հայտնում, նկարագրում, հարց տալիս ու պատասխանում հարցերի: Այս ամենը բնականաբար, խոսքի զարգացման հատուկ պարապմունքներից ոչ պակաս նպաստում է երեխայի խոսքային կարողությունների զարգացմանը: Նախ նշենք, որ երեխան ավելի շատ սովորում է լսածը գործողության վերածելով, քան մենակ լսելով: Այդ իսկ պատճառով ծեսերի և տոների իրագործումը երեխաների մասնակցությամբ շատ արդյունավետ միջոց է այդ

ամենին հասնելու համար, քանի որ ծեսերի կազմակերպումը ամբողջությամբ խաղ է և գործողությունների շարան: Շատ կարևոր է երեխային ներգրավել ծեսի նախապատրաստական աշխատանքներին: Այդ նախապատրաստական աշխատանքները հիմնականում ծիսական պարագաների պատրաստումն է: Այս գործողությունների ընթացքում երեխաները հնարավորություն են ունենում նկարելու, ներկելու, կտրելու և տարբեր նյութերից ծիսական պարագաներ պատրաստելու:

Այս ընթացքում երեխաները խոսում են ծեսի մասին: Նրանք իրենց երևակայությամբ կարող են հորինել ու ավելացնել նոր դրվագներ, պատմել ու ավելացնել (այսինքն խաղալ) այն ինչ իրենց հոգուն ու միջավայրին է հարազատ: Հենց այն ամենը շատ մեծ ազդեցություն է թողնում երեխայի խոսքին նպաստող՝ սոցիալական, հուզական և մտավոր զարգացման վրա:

3.1 «Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցությունն ազգային ծեսերի կազմակերպման և իրագործման ընթացքում

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտոզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզն իրապես շահում է ծնողների՝ տվյալ բնագավառին իրազեկվածությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից: Դրա շնորհիվ մանկավարժներն հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացման: Համագործակցության արդյունքում թե ծնողը, թե դաստիարակը արժեքավոր տեղեկություններ է ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին: Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս նա է իր կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում: Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին ինքնուրույն հասնելու հաջողության:

Որպես դաստիարակ և ծնող, շատ կարևոր է մանկապարքեզ–ընտանիք համագործակցությունը: Երբ ծնողը մասնակից է լինում մանկապարտեզում կազմակերպված ծեսերին և միջոցառումներին դա ավելի է մտերմացնում մանկապարտեզ–ընտանիք կապը: Մշտապես շփումը մանկապարտեզի անձնակազմի հետ ծնողների վստահությունը ավելի է բարձրանում մանկապարտեզի

և դաստիարակների նկատմամբ, ավելի համախմբված են լինում։ մանկապարտեզ – ընտանիք կապի ամրապնդման համար շատ կարևոր է համատեղ աշխատանքը։

Եզրակացություն

Եզրափակելով հետազոտական աշխատանքը ներկայացնում եմ իմ եզրահանգումներն ու առաջարկությունները։ Ազգային տոների և ծեսերի կազմակերպումը պետք է գերիշխեն կրթական գործընթացում, պարապմունքները նույնպես պետք է հագեցած լինեն ազգային թեմաներով և համապատասխան դիդակտիկ նյութերով։ Քանզի մենք օրհասական վտանգի առջև ենք և պետք է արժևորենք մերը՝ հայկականը և մեր նախնիների թողած թանկ ժառանգությունը։ Գիտակցելով, որ մշակույթը ցանկացած ազգի ոգին է և առաջնակարգ դեր ունի ազգապահպանության առումով։ Երեխաներին պետք է հասցնել գիտակցական այն մակարդակին, որ նախ եղածը պետք է պահպանել, իսկ հետո եղածին ավելացնել կարողանալ։

Ազգային տոների և ծեսերի կազմակերպման համար ցանկալի է ունենալ պրոյեկտոր, այն արդյունավետ անցկացնելու համար։

Գրականության ցանկ

1. ՀՀ Կապանի Համայքապետարան, ուսումնական ուղեցույց /Կապան 2021/

2. Ռիմա Ռստիկյան – Հայկական ծեսերը

3. Հրանուշ Խառատյան– Հայ ժողովրդական տոները

4. Մ.Սահակյանի Նախադպրոցականի ազգային դաստիարակության հիմնահարցերը Սոֆյա Արղությանի մանկավարժական հայացքներում։

5. Մ. Սեբաստացի կրթահամալիր, Մարինե Մկրտչյան–Հայ ազգային տոներն ու ծեսերը։